



Եվրոպական պայմանագրերի շարք - Թիվ 1/6/7/8/11

ոչ պաշտոնական թարգմանություն

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Լոնդոն, 5.V.1949

Եվրոպայի խորհրդի կանոնադրությունը թիվ «1»-ն է Եվրոպական պայմանագրերի շարքում: Ավելի ուշ ընդունված լրացումներն ու կանոնադրական բնույթի փաստաթղթերը թվագրված են 6, 7, 8 եւ 11 նիշերով:

Բելգիայի Թագավորության, Դանիայի Թագավորության, Ֆրանսիական Հանրապետության, Իռլանդիայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության, Նիդեռլանդների Թագավորության, Նորվեգիայի Թագավորության, Շվեդիայի Թագավորության եւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարությունները,

Համոզված լինելով, որ արդարության եւ միջազգային համագործակցության վրա հիմնված խաղաղությանը հետամուտ լինելը կենսական նշանակություն ունի մարդկային հասարակարգի եւ քաղաքակրթության պահպանման համար.

Վերահաստատելով իրենց նվիրվածությունը հոգևոր եւ բարոյական այն արժեքներին, որոնք հանդիսանում են իրենց ժողովուրդների ընդհանուր ժառանգությունը, անհատական ազատության, քաղաքական ազատության եւ իրավունքի տիրապետության իրական աղբյուրը, սկզբունքներ, որոնք կազմում են իրական ժողովրդավարության հիմքը.

Հավատալով, որ այս իդեալների պահպանման եւ հետագա իրագործման համար եւ ի շահ տնտեսական եւ սոցիալական առաջընթացի կարիք կա Եվրոպայի բոլոր գաղափարակից պետությունների ավելի սերտ միության.

Նկատի առնելով, որ այս կարիքին եւ այս կապակցությամբ իրենց ժողովուրդների արտահայտած ձգտումներին արձագանքելու համար անհրաժեշտ է ստեղծել մի կազմակերպություն, որն ավելի սերտորեն կմիավորի եվրոպական պետություններին.

Արդյունքում որոշել են կազմավորել Եվրոպայի խորհուրդը՝ կազմված կառավարությունների ներկայացուցիչների հանձնաժողովից եւ խորհրդակցական ժողովից, եւ այս նպատակով ընդունեցին հետևյալ կանոնադրությունը:

Բաժին I – Եվրոպայի խորհրդի նպատակը

Հոդված 1

ա Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների ավելի մեծ միասնության՝ հանուն այն իդեալների եւ սկզբունքների պահպանման եւ իրագործման, որոնք նրանց ընդհանուր ժառանգությունն են, եւ տնտեսական ու սոցիալական առաջընթացի խթանման:

բ Այս նպատակը պետք է հետապնդվի Խորհրդի մարմինների միջոցով՝ ընդհանուր մտահոգության առարկա հանդիսացող խնդիրների քննարկման եւ համաձայնագրերի ու տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական, իրավական եւ վարչական հարցերում համատեղ գործողությունների միջոցով, եւ ի պահպանում եւ հետագա իրագործում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների:

գ Մասնակցությունը Եվրոպայի Խորհրդին չպետք է ազդի ՄԱԿ-ում եւ միջազգային այլ կազմակերպությունների կամ միությունների աշխատանքում նրա անդամների համագործակցության վրա, որոնց անդամն են նրանք հանդիսանում:

դ Պետական պաշտպանությանն առնչվող խնդիրները չեն տեղավորվում Եվրոպայի Խորհրդի շրջանակներում:

Բաժին II – Անդամակցությունը

Հոդված 2

Սույն Կանոնադրության կողմերը Եվրոպայի խորհրդի անդամներն են:

Հոդված 3

Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավական պետության եւ իր իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց կողմից մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից օգտվելու սկզբունքները եւ անկեղծորեն ու արդյունավետորեն համագործակցի հանուն Խորհրդի՝ Հոդված I-ում սահմանված նպատակի իրագործման:

Հոդված 4

Եթե համարվում է, որ եվրոպական որեւէ պետություն կարող է եւ ցանկանում է իրականացնել Հոդված 3-ի դրույթները, այն կարող է Նախարարների կոմիտեի կողմից հրավիրվել դառնալու Եվրոպայի խորհրդի անդամ: Այս կերպ հրավիրված ցանկացած պետություն անդամ է դառնում Գլխավոր քարտուղարին իր կողմից ի պահ տալով սույն Կանոնադրությանը միանալու վերաբերյալ փաստաթուղթը:

Հոդված 5

ա. Հատուկ հանգամանքներում, եթե համարվում է, որ եվրոպական որեւէ երկիր կարող է եւ ցանկանում է իրականացնել Հոդված 3-ի դրույթները, ապա այն կարող է Նախարարների կոմիտեի կողմից հրավիրվել դառնալու Եվրոպայի խորհրդի ասոցիացված անդամ: Այս կերպ հրավիրված ցանկացած պետություն ասոցիացված անդամ է դառնում Գլխավոր քարտուղարին իր կողմից ի պահ տալով սույն Կանոնադրությունն ընդունելու վերաբերյալ փաստաթուղթը: Ասոցիացված անդամը իրավունք ունի ներկայացված լինել միայն Խորհրդակցական ժողովում:

բ. Սույն կանոնադրությունում «անդամ» արտահայտությունը ներառում է ասոցիացված անդամին, բացի այն դեպքերից, երբ կիրառվում է Նախարարների կոմիտեում ներկայացվածության կապակցությամբ:

Հոդված 6

Նախքան ըստ վերոնշյալ հոդված 4-ի կամ 5-ի դրույթների հրավեր ներկայացնելը, Նախարարների կոմիտեն պետք է որոշի, թե Խորհրդակցական ժողովում քանի անդամով ներկայացված լինելու իրավունք ունի առաջարկվող անդամը եւ որքան պետք է լինի նրա համամասնական ֆինանսական ներդրումը:

Հոդված 7

Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ կարող է դադարեցնել անդամությունը՝ պաշտոնապես Գլխավոր քարտուղարին տեղեկացնելով այդպես վարվելու իր մտադրության մասին: Անդամությունն այս կերպ դադարեցնելը ուժի մեջ է մտնում ֆինանսական այն տարվա վերջում, որի ընթացքում տեղեկացվել է այդ մտադրության մասին, եթե տեղեկացումը տրվել է սովյալ ֆինանսական տարվա առաջին ինն ամիսների ընթացքում: Եթե տեղեկացումը տրվում է ֆինանսական տարվա վերջին երեք ամիսների ընթացքում, ապա

այն պետք է ուժի մեջ մտնի հաջորդ ֆինանսական տարվա ավարտին:

Հոդված 8

Հոդված 3-ը լրջորեն խախտած Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամի ներկայացված լինելու իրավունքը կարող է առկախվել, եւ Նախարարների կոմիտեն կարող է առաջարկել դադարեցնել անդամությունը՝ համաձայն Հոդված 7-ի: Եթե այդպիսի անդամը չի իրականացնում այդ առաջարկը, Կոմիտեն կարող է որոշել, որ այն դադարել է Խորհրդի անդամ լինելուց՝ սկսած այն ժամկետից, որ կսահամանի Կոմիտեն:

Հոդված 9

Նախարարների կոմիտեն կարող է առկախել իր ֆինանսական պարտավորությունը չկատարած անդամի՝ Կոմիտեում եւ Խորհրդակցական ժողովում ներկայացված լինելու իրավունքն այնքան ժամանակով, քանի դեռ այդ պարտավորությունը մնում է անկատար:

Բաժին III – Ընդհանուր

Հոդված 10

Եվրոպայի խորհրդի մարմիններն են.

- i Նախարարների կոմիտեն
- ii Խորհրդակցական ժողովը:

Այս երկու մարմիններն էլ սպասարկվում են Եվրոպայի խորհրդի քարտուղարության կողմից:

Հոդված 11

Եվրոպայի խորհրդի նստավայրը Ստրասբուրգն է:

Հոդված 12

Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներ են անգլերենն ու ֆրանսերենը: Այլ լեզուների օգտագործման հանգամանքներն ու պայմանները որոշվում են Նախարարների կոմիտեի եւ Խորհրդակցական ժողովի կանոնակարգերով:

Բաժին IV – Նախարարների կոմիտե

Հոդված 13

Նախարարների կոմիտեն այն մարմինն է, որը գործում է Եվրոպայի խորհրդի անունից, համաձայն Հոդված 15-ի եւ 16-ի:

Հոդված 14

Յուրաքանչյուր անդամ Նախարարների կոմիտեում մեկ ներկայացուցիչ ունենալու իրավունք ունի, եւ յուրաքանչյուր ներկայացուցիչ ունի մեկ ձայնի իրավունք: Կոմիտեում ներկայացուցիչները պետք է լինեն արտաքին գործերի նախարարները: Եթե արտաքին գործերի որեւէ նախարար ի վիճակի չէ ներկա գտնվել կամ այլ հանգամանքներում, եթե այդպես ցանկալի է, նրա փոխարեն կարող է առաջադրվել փոխարինող, ով հնարավորության դեպքում պետք է լինի իր երկրի կառավարության անդամ:

Հոդված 15

- ա. Խորհրդակցական ժողովի առաջարկով կամ սեփական նախաձեռնությամբ

Նախարարների կոմիտեն քննարկում է Եվրոպայի խորհրդի նպատակի առաջնորդման համար անհրաժեշտ գործողությունների ձեռնարկումը, ներառյալ կոնվենցիաների կամ համաձայնագրերի վերաբերյալ եզրակացություններ տալը եւ կառավարությունների կողմից որոշակի հարցերի կապակցությամբ միասնական քաղաքականության որդեգրումը: Կոմիտեի եզրակացությունները անդամներին է փոխանցում Գլխավոր քարտուղարը:

բ. Համապատասխան դեպքերում Կոմիտեի եզրակացությունները կարող են իր անդամների կառավարություններին ուղղված առաջարկությունների բնույթ կրել, եւ Կոմիտեն կարող է առաջարկել, որ անդամ պետությունների կառավարությունները տեղեկացնեն իրեն իրենց կողմից այդ առաջարկությունների կապակցությամբ ձեռնարկված գործողությունների մասին:

Հոդված 16

Նախարարների կոմիտեն, համաձայն հոդվածներ 24, 28, 30, 32, 33 եւ 35-ի դրույթների, որոնք առնչվում են Խորհրդակցական ժողովի իրավասություններին, կայացնում է իրականացման համար պարտադիր որոշումներ Եվրոպայի խորհրդի ներքին կազմակերպման եւ աշխատակարգերին վերաբերող բոլոր խնդիրների մասին: Այս նպատակով Նախարարների կոմիտեն պետք է ընդունի ֆինանսական եւ վարչական անհրաժեշտ կանոնակարգեր:

Հոդված 17

Նախարարների կոմիտեն կարող է ձեւավորել խորհրդակցական եւ տեխնիկական կոմիտեներ կամ հանձնախմբեր առանձնահատուկ այնպիսի նպատակների համար, որպիսիք կհամարի ցանկալի:

Հոդված 18

Նախարարների կոմիտեն պետք է ընդունի իր կանոնակարգը, որը, այլ հարցերի թվում, պետք է սահմանի՝

- i քվորումը.
- ii Նախագահի նշանակման մեթոդն ու նրա պաշտոնավարման ժամկետը.
- iii հարցերն օրակարգում ընդգրկելու ընթացակարգը, ներառյալ բանաձեւերի նախագծերի վերաբերյալ տեղեկացնելը եւ
- iv փոխարինողների առաջադրման համար անհրաժեշտ ծանուցումները՝ Հոդված 14-ի շրջանակներում:

Հոդված 19

Խորհրդակցական ժողովի յուրաքանչյուր նիստում Նախարարների կոմիտեն ժողովին է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

Հոդված 20

ա Նախարարների կոմիտեի բանաձեւերը՝ կապված այնպիսի կարեւոր հարցերի հետ, ինչպիսիք են՝

- i առաջարկություններ՝ Հոդված 15.բ-ի շրջանակներում.

- ii հարցեր՝ Հոդված 19-ի շրջանակներում.
 - iii հարցեր՝ հոդված 21.ա.թ. եւ բ-ի շրջանակներում.
 - iv հարցեր հոդված 33-ի շրջանակներում;
 - v առաջարկություններ Հոդված 1.դ, 7, 15, 20 եւ 22-ում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու վերաբերյալ եւ
 - vi ցանկացած այլ հարց, որի վերաբերյալ ներքոնշյալ դ. կետի համաձայն ընդունված բանաձեռով Կոմիտեն կարող է որոշել, որ այն պետք է ընդունվի միաձայն՝ ելնելով դրա կարեւորությունից,
- պահանջում են քվեարկությանը մասնակցող ներկայացուցիչների միաձայն եւ կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցողների մեծամասնության քվեն:
- բ. Կանոնակարգից կամ ֆինանսական եւ վարչական կանոնադրություններից բխող հարցերը կարող են կարգավորվել կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող ներկայացուցիչների ձայների պարզ մեծամասնությամբ:
- գ. Հոդված 4 –ից եւ 5-ից շրջանակներում Կոմիտեի բանաձեռերը պահանջում են Կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող ներկայացուցիչների ձայների երկու երրորդ մեծամասնությունը:
- դ. Կոմիտեի բոլոր այլ բանաձեռերը, ներառյալ բյուջեի, կանոնակարգի եւ ֆինանսական եւ վարչական կանոնակարգերի ընդունումը, սույն կանոնակարգի հոդվածներում փոփոխությունների եւ լրացումների հետ կապված հանձնարարականները, որոնք վերոնշյալ պարբերություն ա. V-ում հիշատակված չեն, եւ կասկածի առկայության պարագայում որոշելը, թե սույն հոդվածի որ պարբերությունն է գործում, պահանջում են քվեարկությանը մասնակցող ներկայացուցիչների երկու երրորդ մեծամասնությունը եւ Կոմիտեի անդամ ներկայացուցիչների ձայների մեծամասնությունը:

Հոդված 21

ա Կոմիտեի կողմից այլ որոշման բացակայության պայմաններում Նախարարների Կոմիտեի նիստերը պետք է անցկացվեն.

- i փակ եւ
- ii Խորհրդի նստավայրում

բ Կոմիտեն որոշում է, թե ինչ տեղեկություններ պետք է հրապարակվեն փակ նիստերի եզրակացությունների եւ քննարկումների կապակցությամբ:

գ Կոմիտեն նիստ է գումարում Խորհրդակցական ժողովի յուրաքանչյուր նստաշրջանից առաջ, դրա սկզբում եւ այլ ժամանակ՝ համաձայն Կոմիտեի որոշման:

Բաժին V – Խորհրդակցական ժողով

Հոդված 22

Խորհրդակցական ժողովը Եվրոպայի խորհրդի խորհրդակցական մարմինն է: Այն իր իրավասությունների եւ սույն Կանոնադրության շրջանակներում քննարկում է հարցեր եւ իր եզրակացությունները առաջարկությունների ձեռով ներկայացնում Նախարարների կոմիտեին:

Հոդված 23¹

ա Խորհրդակցական ժողովը կարող է քննարկել եւ առաջարկություններ ներկայացնել Եվրոպայի խորհրդի նպատակի եւ գործունեության ոլորտի շրջանակներում, ինչպես որ սահմանված է Բաժին I-ում: Այն նաեւ կարող է քննարկել եւ առաջարկություններ ներկայացնել ցանկացած հարցի կապակցությամբ, երբ Նախարարների կոմիտեն դիմում է նրան՝ խնդրելով կարծիք ներկայացնել:

բ Ժողովը իր օրակարգը ձեւավորում է վերոնշյալ պարբերություն ա-ի դրույթների համաձայն: Այն դեպքում այն պետք է հաշվի առնի եվրոպական այլ միջկառավարական կազմակերպությունների աշխատանքը, որոնց անդամակցում են Խորհրդի անդամները կամ նրանց մի մասը:

գ Ժողովի նախագահը կասկածի առկայության պարագայում որոշում է, թե արդյոք նստաշրջանի ընթացքում բարձրացված որեւէ հարց Ժողովի օրակարգի շրջանակներում է:

Հոդված 24

Խորհրդակցական ժողովը կարող է, հաշվի առնելով Հոդված 38.դ-ի դրույթները, հիմնել կոմիտեներ կամ հանձնախմբեր, որոնք քննարկում կկատարեն եւ իրեն կզեկուցեն համաձայն Հոդված 23-ի շրջանակներում իր իրավասության ներքո գտնվող ցանկացած հարցի վերաբերյալ, քննության կառնեն եւ հարցեր կնախապատրաստեն իր օրակարգի համար եւ խորհրդատվություն կապահովեն ընթացակարգային բոլոր հարցերի վերաբերյալ:

Հոդված 25²

ա Խորհրդակցական ժողովը պետք է կազմված լինի բոլոր անդամ պետությունների ներկայացուցիչներից՝ ընտրված կամ նշանակված տվյալ պետության խորհրդարանի կողմից իր անդամների թվից, ինչպես որ այն կորոշի: Այդուհանդերձ, յուրաքանչյուր կառավարության իրավունքն է անհրաժեշտության դեպքում կատարել լրացուցիչ նշանակումներ, երբ խորհրդարանի նստաշրջան չի գումարվում եւ խորհրդարանը չի որոշել այն ընթացակարգը, որով պետք է առաջնորդվել այդ դեպքում: Յուրաքանչյուր ներկայացուցիչ պետք է լինի այն անդամ պետության քաղաքացի, որը ներկայացնում է, սակայն չպետք է միեւնույն ժամանակ լինի Նախարարների կոմիտեի անդամ:

Այս կերպ նշանակված ներկայացուցիչների պաշտոնավարման ժամկետը կհաշվարկվի նրանց նշանակմանը հաջորդած հերտական նստաշրջանի բացումից սկսած: Այն կսպառվի հաջորդ հերթական նստաշրջանի կամ դրան հաջորդող հերթական նստաշրջանի բացմանը: Բացի այդ, եթե տեղի են ունենում իրենց երկրների խորհրդարանների ընտրություններ, անդամներն իրավունք ունեն նոր նշանակումներ կատարել:

Եթե անդամը լրացնում է մահվան կամ պաշտոնաթողության պատճառով առաջացած թափուր տեղը, կամ պատրաստվում է նոր նշանակում կատարել իր երկրում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում, նոր ներկայացուցիչների պաշտոնավարման ժամկետը կհաշվարկվի սկսած Ժողովի՝ իրենց նշանակմանը հաջորդած

¹ Լրամշակված է 1951 թվականի մայիսին:

² Պարբերություն ա-ի առաջին նախադասությունը, լրամշակված 1951 թվականի մայիսին: Պարբերություն ա-ի վերջին երկու ենթապարբերություններն ավելացվել են 1953 թվականի մայիսին. պարբերություն ա-ի առաջին ենթապարբերությունը՝ լրամշակված 1970 թվականի հոկտեմբերին:

առաջին նիստից:

բ Որեւէ ներկայացուցիչ չպետք է հեռացվի իր պաշտոնից ժողովի նստաշրջանի ընթացքում՝ առանց Ժողովի համաձայնության:

գ Յուրաքանչյուր ներկայացուցիչ պետք է ունենա փոխարինող, ով կարող է ներկայացուցչի բացակայության դեպքում, մասնակցել, ելույթ ունենալ եւ քվեարկել նրա փոխարեն: Վերոնշյալ պարբերություն ա-ի դրույթները կիրառվում են փոխարինողների նշանակման պարագայում:

Հոդված 26¹

Անդամները իրավունք ունեն ներկայացված լինել հետեւյալ թվով անդամներով.

¹ Լրամշակված է 1951 թվականի դեկտեմբերին, 1958 թվականի մայիսին, 1961 թվականի նոյեմբերին, 1963 թվականի մայիսին, 1965 թվականի մայիսին, 1971 թվականի փետրվարին, 1974 թվականի դեկտեմբերին, 1976 թվականի հոկտեմբերին, 1978 թվականի հունվարին, 1978 թվականի նոյեմբերին, 1988 թվականի նոյեմբերին, 1989 թվականի մայիսին, 1990 թվականի նոյեմբերին, 1991 թվականի նոյեմբերին, 1992 թվականի մայիսին, 1993 թվականի մայիսին, 1993 թվականի հունիսին, 1993 թվականի հոկտեմբերին, 1994 թվականի նոյեմբերին, 1995 թվականի փետրվարին, 1995 թվականի նոյեմբերին, 1996 թվականի փետրվարին, 1996 թվականի նոյեմբերին, 1999 թվականի ապրիլին, 2001 թվականի հունվարին, 2002 թվականի մայիսին, 2003 թվականի ապրիլին եւ 2004 թվականի հոկտեմբերին:

		Լիխտենշտեյն	2
Ալբանիա	4	Լիտվա	4
Անդորրա	2	Լյուքսեմբուրգ	3
Հայաստան	4	Մալթա	3
Ավստրիա	6	Մոլդովա	5
Ադրբեջան	6	Մոնակո	2
Բելգիա	7	Նիդեռլանդներ	7
Բոսնիա եւ Հերցեգովինա	5	Նորվեգիա	5
Բուլղարիա	6	Լեհաստան	12
Խորվաթիա	5	Պորտուգալիա	7
Կիպրոս	3	Ռումինիա	10
Չեխիա	7	Ռուսաստան	18
Դանիա	5	Սան Մարինո	2
Էստոնիա	3	Սերբիա եւ Մոնտենեգրո	7
Ֆինլանդիա	5	Սլովակիա	5
Ֆրանսիա	18	Սլովենիա	3
Վրաստան	5	Իսպանիա	12
Գերմանիա	18	Շվեդիա	6
Հունաստան	7	Շվեյցարիա	6
Հունգարիա	7	Մակեդոնիայի հարավսլավական հանրապետություն ³	12
Իսլանդիա	3	Թուրքիա	12
Իռլանդիա	4	Ուկրաինա	12
Իտալիա	18	Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	18
Լատվիա	3		

Հոդված 27¹

Այն պայմանները, որոնց համաձայն Նախարարների կոմիտեն որպես հավաքականություն կարող է ներկայացված լինել Խորհրդակցական Ժողովի բանավեճերում, կամ Կոմիտեի անհատ անդամները կամ նրանց փոխարինողները կարող են ելույթ ունենալ Ժողովում, սահմանվում են այս հարցի վերաբերյալ այնպիսի կանոնակարգերով, ինչպիսիք նախապատրաստվում են Կոմիտեի կողմից՝ Ժողովում

¹1951 թվականի լրամշակված տարբերակի համաձայն:

քննարկելուց հետո:

Հոդված 28

ա Խորհրդակցական Ժողովն ընդունում է իր կանոնակարգը եւ իր անդամներից ընտրում իր Նախագահին, որը պաշտոնավարում է մինչեւ հաջորդ հերթական նստաշրջանը:

բ Նախագահը վերահսկում է աշխատանքները, սակայն չի մանասակցում բանավեճին կամ քվեարկությանը: Նախագահի պաշտոնում ընտրված ներկայացուցչի փոխարինողը կարող է զբաղեցնել նրա տեղը, ելույթ ունենալ եւ քվեարկել նրա փոխարեն:

գ Կանոնակարգը սահմանում է, այլ հարցերի թվում`

i քվորումը.

ii Նախագահի եւ այլ պաշտոնյաների ընտրության եղանակն ու պաշտոնավարման ժամկետները.

iii օրակարգի ձեւավորման եւ ներկայացուցիչներին այդ մասին տեղեկացնելու եղանակը.

iv ներկայացուցիչների եւ նրանց փոխարինողների անունների ծանուցման ժամանակն ու եղանակը:

Հոդված 29

Համաձայն Հոդված 30-ի դրույթների, Խորհրդակցական ժողովի բոլոր բանաձեւերը, ներառյալ նրանք, որոնք.

i ներառում են Նախարարների Կոմիտեին ներկայացվող առաջարկությունները.

ii Կոմիտեին են ներկայացնում հարցեր` Ժողովում քննարկման դնելու համար.

iii հիմնադրում են կոմիտեներ կամ հանձնաժողովներ.

iv որոշում են նստաշրջանների մեկնարկի օրը.

v որոշում են, թե ձայների ինչպիսի մեծամասնություն է անհրաժեշտ վերոնշյալ i-ից iv բաժիններում չներառված դեպքերում բանաձեւերի ընդունման համար կամ որոշում են այն դեպքերը, որոնց համար միանաշանակ էչ, թե ինչպիսի մեծամասնություն է անհրաժեշտ,

ընդունվում են քվեարկությանը մասնակցող ներկայացուցիչների ձայների երկու երրորդով:

Հոդված 30

Իր ներքին ընթացակարգին վերաբերող հարցերում, որոնք ներառում են պաշտոնյաների ընտրությունը, կոմիտեներում եւ հանձնաժողովներում ծառայություն իրականացնելու համար անձանց առաջադրումը եւ կանոնակարգի ընդունումը, Խորհրդակցական ժողովի բանաձեւերն ընդունվում են այնպիսի մեծամասնությամբ, ինչպիսին որ սահմանում է Ժողովը համաձայն Հոդված 29.v.-ի:

Հոդված 31

Քննարկումները Նախարարների կոմիտեին ներկայացվելիք առաջարկների վերաբերյալ, համաձայն որոնց տվյալ հարցը պետք է ներառվի Խորհրդակցական ժողովի օրակարգում, պետք է սահմանափակվեն առաջարկվող թեմատիկ խնդրի եւ օրակարգում

դրա ներառման թեր եւ դեմ կողմերի պատճառների մատնանշմամբ:

Հոդված 32

Խորհրդակցական Ժողովը հերթական նստաշրջան է գումարում տարին մեկ անգամ, որի ժամկետը եւ տեւողությունը որոշվում է Ժողովի կողմից՝ հնարավորության դեպքում խուսափելու համար խորհրդարանական նստաշրջանների եւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանների հետ հնարավոր համընկնումից: Հերթական նստաշրջանի տեւողությունը ոչ մի պարագայում չպետք է գերազանցի մեկ ամիսը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ժողովի եւ Նախարարների կոմիտեի նիստերը համընկնում են:

Հոդված 33

Խորհրդակցական Ժողովի հերթական նստաշրջաններն անցկացվում են Խորհրդի նստավայրում, բացառությամբ եթե Ժողովը եւ Կոմիտեն համակարծիք են, որ նստաշրջանը պետք է անցկացվի որեւէ այլ վայրում:

Հոդված 34¹

Խորհրդակցական ժողովը կարող է արտահերթ նստաշրջան գումարել կամ Նախարարների կոմիտեի, կամ Ժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ նրանց միջեւ կայացած փոխհամաձայնության արդյունքում. նույնպիսի համաձայնությամբ որոշվում է նաեւ նստաժրջանի ժամկետն ու գումարման վայրը:

Հոդված 35

Խորհրդակցական Ժողովի քննարկումները հրապարակային են, եթե այն այլ որոշում չի կայացնում:

Բաժին VI – Քարտուղարություն

Հոդված 36

ա Քարտուղարությունը կազմված է Գլխավոր քարտուղարից, Գլխավոր քարտուղարի տեղակալից եւ, ըստ պահանջի, այլ աշխատակազմից:

բ Գլխավոր քարտուղարը եւ Գլխավոր քարտուղարի տեղակալը նշանակվում են Խորհրդակցական ժողովի կողմից՝ Նախարարների կոմիտեի առաջարկությամբ:

գ Քարտուղարության մնացյալ աշխատակազմը նշանակվում է Գլխավոր քարտուղարի կողմից, համաձայն վարչական կանոնակարգերի:

դ Քարտուղարության որեւէ անդամ չի կարող որեւէ կառավարությունում վճարվող պաշտոն զբաղեցնել կամ լինել Խորհրդակցական ժողովի կամ որեւէ պետության օրենսդրական մարմնի անդամ կամ ներգրավված լինել իր պարտականությունների հետ անհամատեղելի որեւէ գործում:

ե Քարտուղարության աշխատակազմի յուրաքանչյուր անդամ պաշտոնական հայտարարություն է անում՝ հաստատելով, որ ինքը պարտավորություններ է ստանձնում Եվրոպայի խորհրդի նկատմամբ եւ որ կատարելու է իր պարտավորությունները բարեխղճորեն, չենթարկվելով որեւէ ազգային հանգամանքի ազդեցության, եւ որ ինքն իր պարտավորությունների կատարման կապակցությամբ չի ձգտի ստանալ եւ չի ստանա

¹ Լրամշակված 1951 թվականի մայիսին:

ցուցումներ Խորհրդից դուրս որեւէ կառավարության կամ որեւէ իշխանության կողմից եւ ձեռնպահ կմնա ցանկացած գործողությունից, որը բացասաբար կազդի իր՝ որպէս բացառապէս Խորհրդին պատասխանատու միջազգային պաշտոնյայի դիրքի վրա: Գլխավոր քարտուղարի կամ Գլխավոր քարտուղարի տեղակալի պարագայում այդ հայտարարությունն արվում է Կոմիտէի առջեւ, իսկ մնացած բոլոր անդամների պարագայում՝ Գլխավոր քարտուղարի առջեւ: Յուրաքանչյուր անդամ պետք է հարգի Գլխավոր քարտուղարի եւ Քարտուղարության աշխատակազմի պարտականությունների բացառապէս միջազգային բնույթը եւ չձգտի ներգործել նրանց վրա իրենց պարտականությունների իրացման ընթացքում:

Հոդված 37

ա Քարտուղարությունը տեղակայվում է Խորհրդի նստավայրում:

բ Գլխավոր քարտուղարը Նախարարների կոմիտէի առջեւ պատասխանատու է Քարտուղարության աշխատանքի համար: Այլ բաների թվում նա, համաձայն Հոդված 38.դ-ի, տրամադրում է քարտուղարական եւ այլ տեսակի աջակցություն, ելնելով Խորհրդակցական ժողովի կարիքներից:

Բաժին VII – Ֆինանսավորում

Հոդված 38¹

ա Յուրաքանչյուր անդամ հոգում է Նախարարների կոմիտէում եւ Խորհրդակցական ժողովում իր սեփական ներկայացվածության ծախսերը:

բ Քարտուղարության, ինչպէս նաեւ ընդհանուր բնույթի մնացած բոլոր ծախսերը բաժանվում են բոլոր անդամների միջեւ՝ այն համամասնությամբ, որ կորոշվի Կոմիտէի կողմից՝ հիմնվելով անդամների բնակչության թվի վրա:

Ասոցիացված անդամի ներդրումների հարցը որոշվում է Կոմիտէի կողմից:

գ Համաձայն ֆինանսական կանոնակարգերի, Խորհրդի բյուջեն յուրաքանչյուր տարի Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվում է Կոմիտէի հաստատմանը:

դ Գլխավոր քարտուղարը Կոմիտէին է փոխանցում Ժողովի պահանջագրերը, որոնք ներառում են Ժողովի եւ նրա գործունեության համար բյուջեում արդեն իսկ ներառված գումարը գերազանցող ծախսերը:

ե Գլխավոր քարտուղարը նաեւ Նախարարների կոմիտէին է ներկայացնում այն ծախսերի նախահաշիվը, որոնք կպահանջվեն Կոմիտէին ներկայացված յուրաքանչյուր առաջարկության իրականացման համար: Ցանկացած բանաձեւ, որի իրականացման համար լրացուցիչ ծախսեր են պահանջվում, Կոմիտէի կողմից ընդունված չեն համարվում, քանի դեռ Կոմիտեն չի հաստատել նաեւ այդ լրացուցիչ ծախսերի համապատասխան նախահաշիվները:

Հոդված 39

Գլխավոր քարտուղարը յուրաքանչյուր տարի յուրաքանչյուր անդամի կառավարությանը ծանուցում է վերջինիս ներդրման չափը, եւ յուրաքանչյուր անդամ Գլխավոր քարտուղարին է վճարում իր ներդրման գումարը, ոչ ուշ, քան ծանուցման օրից

¹ Հոդված 38-ի «ե» պարբերությունն ավելացվել է 1951 թվականի մայիսին:

սկսած վեց ամսվա ընթացքում:

Բաժին VIII – Արտոնություններ եւ անձեռնմխելիություն

Հոդված 40

ա Եվրոպայի խորհուրդը, անդամների ներկայացուցիչները եւ Քարտուղարությունը անդամ պետությունների տարածքներում օգտվում են այնպիսի արտոնություններից եւ անձեռնմխելիությունից, որոնց անհրաժեշտությունը հիմնավորված է իրենց գործառույթների իրականացման համար: Այդ անձեռնմխելիությունը ներառում է Խորհրդակցական ժողովում բոլոր ներկայացուցիչների անձեռնմխելիությունը ձեռքակալությունից եւ իրավական բոլոր տեսակի ընթացակարգերից բոլոր անդամների տարածքներում՝ Ժողովի կամ դրա կոմիտեների կամ հանձնաժողովների քննարկումներում նրանց կողմից հնչեցված մտքերի կամ նրանց քվեարկության արդյունքների առնչությամբ:

բ Անդամները հանձն են առնում հնարավորինս կարճ ժամկետում համաձայնության գալ՝ վերոնշյալ պարբերության դրույթներն իրագործելու նպատակով: Այս նպատակով նախարարների կոմիտեն անդամների կառավարություններին առաջարկում է ընդունել համաձայնագիր, որով սահմանվում են բոլոր անդամների տարածքներում շնորհվող արտոնություններն ու անձեռնմխելիությունը: Ի լրումն, հատուկ համաձայնագիր է կնքվում Ֆրանսիայի Հանրապետության հետ, որում սահմանվում են այն արտոնություններն ու անձեռնմխելիությունները, որոնցից պետք է օգտվի Խորհուրդն իր նստավայրում:

Բաժին IX – Փոփոխություններ եւ լրացումներ

Հոդված 41

ա Սույն Կանոնադրությունում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու առաջարկները կարող են կատարվել Նախարարների կոմիտեում կամ, Հոդված 23-ով նաժատեսված պայմանների առկայության դեպքում, Խորհրդակցական ժողովում:

բ Կոմիտեն առաջարկում է հիմնավորում է՝ բանաձեւի տեսքով ընդունել այն լրարցումներն ու փոփոխությունները, որոնք ցանկալի է համարում:

գ Փոփոխություններ եւ լրացումներ կատարող բանաձեւն ուժի մեջ է մտնում անդամների երկու երրորդի կողմից ստորագրվելուց եւ վավերացվելուց հետո:

դ Չնայած սույն հոդվածի նախորդ պարբերությունների դրույթներին, հոդվածներ 23-ից 35-ում, ինչպես նաեւ 35-ում, 38-ում եւ 39-ում կատարված փոփոխությունները եւ լրացումները, որոնք հաստատվել են Կոմիտեի եւ Ժողովի կողմից, ուժի մեջ են մտնում Գլխավոր քարտուղարի հավաստագրի օրը, որը փոխանցվում է անդամ պետությունների կառավարություններին՝ հավաստելով, որ դրանք այդպիսով ընդունվել են: Սույն պարբերությունը չի գործում մինչեւ Ժողովի երկրորդ հերթական նստաշրջանի եզրակացությունը:

Բաժին X – Եզրափակիչ դրույթներ

Հոդված 42

ա Սույն Կանոնադրությունը ենթակա է վավերացման : Վավերացումներն ի պահ են տրվում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Կառավարությանը:

բ Ներկա Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում վավերացման գործիքներն ի պահ

տալուց անմիջապես հետո: Միացյալ Թագավորության կառավարությունը բոլոր ստորագրյալ կառավարություններին է փոխանցում հավաստագիր, որով հռչակվում է Կանոնադրության ուժի մեջ մտնելը եւ ներկայացվում այդ պահի դրությամբ Եվրոպայի Խորհրդի անդամների անունները:

գ Այնուհետեւ յուրաքանչյուր հաջորդ ստորագրյալ դառնում է սույն Կանոնադրության անդամ՝ սկսած իր վավերացման գործիքն ի պահ տալու պահից:

Ի հավաստում որի, ներքոստորագրյալները, ունենալով դրա բոլոր իրավունքները, ստորագրել են ներկա Կանոնադրությունը:

Ստորագրված Լոնդոնում 1949 թվականի մայիսի 5-ին, անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով՝ երկուսն էլ հավասարազոր, մեկ օրինակից, որն ի պահ է տրվում Միացյալ Թագավորության կառավարության արխիվներին, որն էլ այլ ստորագրյալ կառավարություններին է փոխանցում հավաստագրված օրինակները:

Կանոնադրական բնույթի փաստաթղթեր¹
Ընդունված Նախարարների կոմիտեի կողմից
8-րդ և 9-րդ նստաշրջանների ընթացքում՝
որանք Կանոնադրության վերանայված տարբերակում
ներառման վերջնական նպատակով

¹ «Կանոնադրային բնույթի փաստաթղթերի» սույն խմբագրությունը ներառում է բառային բարեփոխումներ, որոնց նպատակն է ունենալ ֆրանսերեն և անգլերեն ճշգրտորեն համընկնող տարբերակներ, որոնք վավերացվել են Նախարարների տեղակալների 40-րդ հավաքի ընթացքում (հունիսի 8-16, 1956 թվական):

I – Բանաձևի ընդունված Նախարարների կոմիտեի կողմից իր 8-րդ նստաշրջանում, 1951 թվականի մայիսին

Նախարարների կոմիտեն,

Սկստի ունենալով Խորհրդակցական ժողովի որոշակի առաջարկությունները Եվրոպայի խորհրդի Կանոնադրությունը վերանայելու վերաբերյալ.

Հաշվի առնելով, որ ներքոշարադրյալ դրույթները չեն հակասում ներկա Կանոնադրությանը.

Հայտարարում է հետևյալ դրույթները կենսագործելու իր մտադրության մասին:

Նոր անդամների ընդունումը

Նախարարների կոմիտեն, նախքան որեւէ պետության՝ Եվրոպայի խորհրդի անդամ կամ ասոցիացված անդամ դառնալու հրավիրելը, համաձայն սույն Կանոնադրության հոդվածներ 4-ի եւ 5-ի, կամ նախքան Եվրոպայի խորհրդի որեւէ անդամի անդամությունը կասեցնելու առաջարկ անելը, համաձայն հոդված 8-ի, նախ խորհրդակցում է Խորհրդակցական ժողովի հետ, համաձայն գոյություն ունեցող պրակտիկայի:

Նախարարների կոմիտեի լիազորությունները

(Կանոնադրության Հոդված 15)

Կոմիտեի եզրակացությունները կարող են, անհրաժեշտության դեպքում, ստանալ կոնվենցիայի կամ համաձայնագրի տեսք: Այդ պարագայում կիրառվում են հետևյալ դրույթները.

i Բանաձևեր կամ համաձայնագիրը Գլխավոր քարտուղարի կողմից հանձնվում է բոլոր անդամներին՝ վավերացման.

ii Յուրաքանչյուր անդամ պարտավորություն է ստանձնում, որ, հանձնումից հետո մեկ տարվա ընթացքում կամ, անհնարինության դեպքում, երբ առկա են բացառիկ հանգամանքներ, տասնութ ամսվա ընթացքում կոնվենցիայի կամ համաձայնագրի վավերացման հարցը քննարկման է դրվելու իր երկրի իշխանության իրավասու մարմնում կամ մարմիններում.

iii Վավերացման գործիքներն ի պահ են տրվում Գլխավոր քարտուղարին.

iv Կոնվենցիան կամ համաձայնագիրն իրավական պարտադիր ուժ ունեն միայն այն վավերացրած երկրների համար:

Համատեղ կոմիտե

i Համատեղ կոմիտեն Եվրոպայի խորհրդի համակարգող մարմինն է: Չխաթարելով Նախարարների կոմիտեի եւ Խորհրդակցական ժողովի համապատասխան իրավունքները, Համատեղ կոմիտեի գործառույթներն են, մասնավորապես՝

ա քննել հիմնախնդիրները, որոնք հատուկ են այս երկու մարմիններին.

բ այդ երկու մարմինների ուշադրությունը հրավիրել Եվրոպայի խորհրդի համար առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վրա.

գ առաջարկություններ կատարել Նախարարներ կոմիտեի եւ Խորհրդակցական

ժողովի նստաշրջանների օրակարգերի նախագծերի վերաբերյալ.

դ քննարկել է և առաջ մղել այս երկու մարմիններից որեւէ մեկի կողմից ընդունված առաջարկությունները կենսագործելու միջոցները.

ii ա Համատեղ կոմիտեն կազմվում է տասներկու անդամների սկզբունքով, որոնցից հինգը ներկայացնում են Նախարարների կոմիտեն, իսկ յոթը՝ Խորհրդակցական ժողովը. վերջին թիվը ներառում է Խորհրդակցական ժողովի նախագահին, որն անդամ է ի պաշտոնե:

Անդամների թիվը կարող է մեծացվել Նախարարների կոմիտեի եւ ժողովի միջեւ կնքված համաձայնագրով: Այդուհանդերձ, Նախարարների կոմիտեն իր հայեցողությամբ իրավունք ունի մեկով կամ երկուսով ավելացնել իր ներկայացուցիչների թիվը:

բ Թէ Նախարարների կոմիտեն եւ թէ Խորհրդակցական ժողովը ազատ են Համատեղ հանձնաժողովում ներկայացուցիչներ ընտրել իրենց նախընտրած մեթոդով:

գ Գլխավոր քարտուղարն իրավասու է մասնակցել Համատեղ հանձնաժողովի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

iii ա Համատեղ հանձնաժողովի նախագահը Խորհրդակցական ժողովի նախագահն է:

բ Հանձնաժողովի աշխատանքները օրինական չեն համարվում, քանի դեռ առկա չէ քվորում՝ բաղկացած Նախարարների կոմիտեի երեք եւ Խորհրդակցական ժողովի հինգ ներկայացուցիչներից :

գ Համատեղ հանձնաժողովի վերջնական որոշումները կայացվում են առանց քվեարկության:

դ Համատեղ հանձնաժողովի նիստերը գումարվում են Նախագահի կողմից եւ տեղի ունենում անհրաժեշտ հաճախականությամբ եւ, մասնավորապես, Նախարարների Կոմիտեի եւ Խորհրդակցական ժողովի նիստերից առաջ եւ հետո:

ե Վերոշարադրյալ դրույթներից ելնելով, Համատեղ հանձնաժողովը կարող է ընդունել սեփական Կանոնակարգ:

Մասնագիտացված մարմիններ

i ա Եվրոպայի խորհուրդը կարող է անդամների միջեւ բանակցություններ նախաձեռնել՝ եվրոպական մասնագիտացված մարմիններ ստեղծելու նպատակով, որոնցից յուրաքանչյուրը իրավասու կլինի տնտեսական, սոցիալական, մշակութային, վարչական կամ այլ ոլորտներում:

բ Յուրաքանչյուր անդամ պետք է ազատ լինի նման եվրոպական մարմիններից որեւէ մեկին միանալու կամ ոչ:

ii Եթե անդամ պետությունները եվրոպական մասնագիտացված մարմիններ են ձեւավորում իրենց միջեւ՝ սեփական նախաձեռնությամբ, ապա Եվրոպայի խորհրդի հետ սույն մարմինների հարաբերություններ հաստատելու ցանկալիությունը քննարկվում է՝ ելնելով Եվրոպական համայնքի՝ որպես ամբողջության շահերից:

iii ա Նախարարների կոմիտեն կարող է առաջարկել, որ մարմիններից յուրաքանչյուրն իր գործունեության վերաբերյալ պարբերական զեկույց ներկայացնի իրեն:

բ Այնքանով, որքանով մասնագիտացված մարմին ձեւավորելու վերաբերյալ որեւէ համաձայնագիր նախատեսում է խորհրդարանական մարմնի ներգրավում, սույն մարմնին

կարող է առաջարկվել պարբերական զեկույց ներկայացնել Եվրոպայի խորհրդի Խորհրդակցական ժողովին:

iv ա Պայմանները, որոնց դեպքում մասնագիտացված մարմինը հարաբերություններ է հաստատում Խորհրդի հետ, կարող են սահմանվել հատուկ համաձայնագրերով՝ կնքված Խորհրդի եւ շահագրգիռ մասնագիտացված մարմնի միջև: Նման համաձայնագրերը կարող են մասնավորապես ներառել.

1 փոխադարձ ներկայացվածությունն եւ, եթե նման հարց է ծագում, Եվրոպայի խորհրդի կառույցների եւ մասնագիտացված մարմինների կառույցների ներհյուսման համապատասխան եղանակներ.

2 տեղեկությունների, փաստաթղթերի եւ վիճակագրական տվյալների փոխանակումը.

3 մասնագիտացված մարմնի կողմից Եվրոպայի խորհրդին զեկույցների եւ Եվրոպայի խորհրդի կողմից մասնագիտացված մարմնին առաջարկությունների ներկայացումը.

4 աշխատակազմին եւ վարչական, տեխնիկական, բյուջետային եւ ֆինանսական ծառայություններին վերաբերող աշխատակարգերը:

բ Այս համաձայնագրերը քննարկում եւ Եվրոպայի խորհրդի անունից կնքում է Նախարարների կոմիտեն, այն բանից հետո երբ Խորհրդակցական ժողովը կարծիք է ներկայացնում:

v Եվրոպայի խորհուրդը կարող է համակարգել Եվրոպայի խորհրդի հետ հարաբերություններ հաստատած մասնագիտացված մարմինների աշխատանքը՝ համաձայն վերոնշյալ դրույթների, անցկացնելով համատեղ քննարկումներ եւ առաջարկություններ ներկայացնելով ինչպես այդ մարմիններին, այնպես էլ անդամ պետությունների կառավարություններին:

Փոխհարաբերությունները միջկառավարական եւ ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների հետ

i Նախարարների կոմիտեն կարող է Եվրոպայի խորհրդի անունից ցանկացած միջկառավարական եւ ոչ կառավարական միջազգային կազմակերպության հետ համաձայնագրեր կնքել Խորհրդի իրավասության շրջանակներում գտնվող հարցերի վերաբերյալ: Սույն համաձայնագրերը մասնավորապես սահմանում են այն պայմանները, որոնցով որեւէ այդպիսի կազմակերպություն փոխհարաբերություններ է հաստատում Եվրոպայի խորհրդի հետ:

ii Եվրոպայի խորհուրդը կամ նրա հաստատություններից ցանկացած մեկը լիազորված է իրականացնել Եվրոպայի խորհրդի իրավասության շրջանակներում գտնվող ցանկացած գործառնություն, որոնք կարող են հանձնարարված լինել Եվրոպական այլ միջկառավարական կազմակերպությունների կողմից: Նախարարների կոմիտեն կնքում է այս նպատակի համար անհրաժեշտ համաձայնագրերը:

iii i պարբերությունում հիշատակված համաձայնագիրը կարող է մասնավորապես սահմանել, որ.

ա Խորհուրդը համապատասխան քայլեր է ձեռնարկում խնդրո առարկա կազմակերպություններից գրավոր կամ բանավոր կերպով պարբերական զեկույցներ եւ

տեղեկություններ ստանալու եւ նրանց այդպիսիք տրամադրելու ուղղությամբ.

բ Խորհուրդը եզրակացություններ է տալիս եւ այս կազմակերպությունների խնդրանքով իրականացնում ծառայություններ:

iv Նախարարների կոմիտեն կարող է Եվրոպայի խորհրդի անունից մշակել համապատասխան աշխատակարգեր՝ միջազգային ոչ կառավարական այն կազմակերպությունների հետ քննարկումներ կազմակերպելու ուղղությամբ, որոնք զբաղվում են Եվրոպայի խորհրդի իրավասության ոլորտում գտնվող խնդիրներով:

II Մասնակի համաձայնություններ

(Բանաձև՝ ընդունված Նախարարների կոմիտեի կողմից 1951 թվականին իր 9-րդ նստաշրջանում)

Նախարարների կոմիտեն

Նկատի առնելով Կանոնադրության Հոդված 20.ա-ն, որը սահմանում է, որ Նախարարների կոմիտեի կողմից անդամ կառավարություններին ներկայացված առաջարկությունները պահանջում են քվեարկող ներկայացուցիչների միաձայն քվեն եւ Կոմիտեի անդամության իրավունք ունեցող ներկայացուցիչների ձայների մեծամասնությունը.

Նկատի առնելով Խորհրդակցական ժողովի կողմից 1950 թվականի օգոստոսին ընդունված Հանձնարարական 3-ը, ցանկանալով հնարավորության պարագայում համաձայնության հասնել միաձայն որոշմամբ, սակայն գիտակցելով, որ, այնուամենայնիվ, որոշակի հանգամանքներում առանձին անդամներ կարող են չցանկանալ մասնակցել այլ անդամների աջակցությանն արժանացած որեւէ գործընթացի.

Հաշվի առնելով, որ այս նպատակով ցանկալի է, որ Կանոնադրության 20.ա հոդվածում արդեն իսկ ընդունված ձեռնպահ մնալու ընթացակարգը պետք է սահմանվի այնպես, որ Նախարարների կոմիտեում առանձին անդամները կարողանան նախագծի քվեարկությանը մասնակցելուց ձեռնպահ մնալու միջոցով խուսափել իրենց գործընկերների կողմից ընդունված որոշումների իրականացումն իրենց կառավարություններին պարտավորեցնելուց.

Որոշում է.

1 Եթե կոմիտեն, քվեարկությանը մասնակցած ներկայացուցիչների միաձայն քվեով եւ Կոմիտեի անդամության իրավունք ունեցող ներկայացուցիչների ձայների մեծամասնությամբ որոշում է, որ իրեն ներկայացված որեւէ նախագծին մասնակցությունից ձեռնպահ մնալը թույլատրվում է, ապա այդ նախագիծը պետք է ներկայացվի Կոմիտեի քննարկմանը. նախագիծը համարվում է ընդունված միայն կողմ քվեարկած ներկայացուցիչների կողմից, եւ դրա կիրառումը սահմանփակվում է համապատասխանաբար:

2 Ցանկացած լրացուցիչ ծախս, որն առաջացել է Խորհրդի կողմից՝ կապված վերոնշյալ ընթացակարգով ընդունված նախագծի հետ, ստանձնում են բացառապես նախագծին կողմ քվեարկած ներկայացուցիչները:

Կանոնադրային բանաձևեր

No. (93) 26 Դիտորդի կարգավիճակի մասին

No. (93) 27 Նախարարների կոմիտեի որոշումների ընդունման համար պահանջվող մեծամասնությունների մասին

No. (93) 28 Մասնակի և ընդլայնված համաձայնությունների մասին

No. (2000) 1 Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի վերաբերյալ

Դիտորդի կարգավիճակի մասին կանոնադրային բանաձև (93) 26

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից on May 1993 թվականի մայիսի 14-ին իր 92-րդ Նստաշրջանում)

Նախարարների կոմիտեն, հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության Հոդված 15-ա-ի եւ 16-ի պայմանները,

Նկատի առնելով Խորհրդարանական վեհաժողովի առաջարկները Եվրոպայի խորհրդի ներսում ինստիտուցիանալ բարեփոխումներ կատարելու վերաբերյալ,

Նկատի առնելով փոփոխված քաղաքական իրավիճակը Եվրոպայում եւ աշխարհում,

Համոզված, որ այս իրավիճակը պահանջում է աճող համագործակցություն Եվրոպայի խորհրդի եւ վերջինիս անդամ չհանդիսացող, սակայն կազմակերպության գաղափարներն ու արժեքները կիսող պետությունների միջև,

Նկատի առնելով, որ սույն համագործակցությանը պետք է տրվի ինստիտուցիոնալ ձեւաչափ,

Նկատի առնելով, որ ներքոնշյալ դրույթները չեն հակասում Եվրոպայի խորհրդի կանոնադրությանը՝

Որոշում է հետեւյալը.

I Ցանկացած պետության, որ կամենում է ընդունել ժողովրդավարության, իրավական պետության եւ իր իրավասության տակ գտնվող բոլոր անձանց կողմից մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից օգտվելու սկզբունքները, եւ ցանկանում է համագործակցել Եվրոպայի խորհրդի հետ, Խորհրդարանական վեհաժողովում քննարկելուց հետո Նախարարների կոմիտեի կողմից կարող է շնորհվել Կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ:

II Դիտորդի կարգավիճակ ունեցող երկրները իրավունք ունեն դիտորդներ ուղարկել Եվրոպայի խորհրդի փորձագիտական այն կոմիտեներ, որոնք ձեւավորվել են Կանոնադրության Հոդված 17-ի ներքո եւ որոնցում բոլոր անդամ պետությունները մասնակիցներ նշանակելու իրավունք ունեն:

III Դիտորդի կարգավիճակ ունեցող երկրներն իրավունք ունեն ընդունող երկրի հրավերով դիտորդներ ուղարկել ճյուղային նախարարների համաժողովներին:

IV Դիտորդի կարգավիճակ ունեցող երկրներին Մասնակի, Ընդլայնված կամ Ընդլայնված մասնակի համաձայնությունների գործունեությանը մասնակցելու հրավերի մասին որոշումները կայացվում են համաձայն համապատասխան համաձայնագրից բխող կանոնների:

V Դիտորդի կարգավիճակն իրավունք չի տալիս ներկայացված լինել Նախարարների կոմիտեում կամ Խորհրդարանական վեհաժողովում, քանի դեռ այդ հաստատություններից որեւէ մեկը չի կայացրել հատուկ որոշում իր իսկ անունից:

VI Դիտորդի կարգավիճակ ունեցող երկրները կարող են Եվրոպայի խորհրդում մշտական անդամ նշանակել:

VII Եվրոպայի խորհրդի հետ սերտորեն համագործակցելու ցանկություն ունեցող միջազգային միջկառավարական կազմակերպությանը, որը ենթադրաբար կարող է կարելոր ներդրում կատարել Խորհրդի աշխատանքում, Նախարարների կոմիտեի կողմից Խորհրդարանական վեհաժողովում քննարկելուց հետո կարող է շնորհվել դիտորդի կարգավիճակ՝ Հոդվածներ II, III եւ IV-ում դիտորդի կարգավիճակ ունեցող երկրների համար սահմանված իրավունքներով:

VIII Նախարարների կոմիտեն կարող է առկախել, իսկ Խորհրդարանական վեհաժողովում

քննարկելուց հետո դադարեցնել դիտորդի կարգավիճակը:

Նախարարների կոմիտեի որոշումների ընդունման համար պահանջվող մեծամասնությունների մասին կանոնադրային բանաձև (93) 27

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 1993 թվականի մայիսի 14-ին իր 92-րդ նստաշրջանում)

Նախարարների կոմիտեն, հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության հոդվածներ 15.ա-ի և 16-ի պայմանները,

Նկատի ունենալով Խորհրդարանական վեհաժողովի առաջարկները Եվրոպայի խորհրդի ներսում ինստիտուցիոնալ բարեփոխումներ կատարելու վերաբերյալ,

Նկատի առնելով Եվրոպայի խորհրդի անդամների թվի աճը և Կազմակերպության գործունակության ուժեղացման անհրաժեշտությունը,

Հետևաբար, ցանկալի համարելով նվազեցնել այն դեպքերի թիվը, երբ Նախարարների կոմիտեում որոշումների կայացման համար պահանջվում է միաձայն քվե,

Նկատի առնելով, որ ներքոնշյալ դրույթները չեն հակասում Եվրոպայի խորհրդի կանոնադրությանը,

Որոշում է հետևյալը.

I Կոնվենցիաները և համաձայնագրերը ստորագրման համար բացելը

Եվրոպայի խորհրդի շրջանակներում կնքված կոնվենցիաները և համաձայնագրերը ստորագրման համար բացելու որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցող ներկայացուցիչների ձայների երկու երրորդով և Կոմիտեի անդամության իրավունք ունեցող ներկայացուցիչների ձայների մեծամասնությամբ, ինչպես սահմանված է Կանոնադրության Հոդված 20.դ-ում:

II Մասնակի համաձայնություններ

Համաձայն Մասնակի և Մասնակի ընդլայնված համաձայնությունների վերաբերյալ Կանոնադրային բանաձևի՝ որոշումները, որոնք որոշ անդամ պետությունների լիազորում են ձեռնամուխ լինել որեւէ գործողության՝ որպես Մասնակի համաձայնության, ընդունվում են քվեարկությանը մասնակցող ներկայացուցիչների ձայների երկու երրորդով և Կոմիտեի անդամության իրավունք ունեցող ներկայացուցիչների ձայների մեծամասնությամբ, ինչպես սահմանված է Կանոնադրության Հոդված 20.դ-ում:

Մասնակի եւ ընդլայնված համաձայնությունների մասին կանոնադրային բանաձեւ (93) 28

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 1993 թվականի մայիսի 14-ին իր 92-րդ Նստաշրջանում)

Նախարարների կոմիտեն,

Նկատի առնելով այն, որ Եվրոպայի խորհրդի Կանոնադրությունը լիազորում է Կազմակերպությանը մի շարք ոլորտներում, որոնցում այն հետամուտ է իր անդամների շրջանում ավելի մեծ միասնության հասնելու նպատակին,

Նկատի առնելով այն, որ Մասնակի համաձայնությունները, որոնք, ինչպես սահմանված է 1951 թվականի օգոստոսի 2-ին Նախարարների կոմիտեի 9-րդ նստաշրջանում ընդունված Կանոնադրային բանաձեւում, անդամներին այլ անդամների աջակցությանն արժանացած գործընթացին մասնակցելուց ձեռնպահ մնալու հնարավորություն են ընձեռում, ապացուցել են իրենց արդյունավետությունը,

Նկատի առնելով այն, որ որոշ դեպքերում խնդիրները, որոնցով զբաղվում է Եվրոպայի խորհուրդը, դուրս են գալիս նրա անդամների տարածքի աշխարհագրական շրջանակից, եւ որ Կազմակերպությունը պետք է պատրաստ լինի քննարկել անդամ չհանդիսացող պետություններից եկող ցանկացած առաջարկ՝ միջկառավարական գործունեության համատեղ իրականացման նպատակով,

Նկատի առնելով այն, որ պետք է սահմանվի դրույթ ճկուն եւ ոչ ինստիտուցիոնալ ընթացակարգերի համար, որոնց միջոցով Եվրոպայի խորհրդի որոշ կամ բոլոր անդամները, ինչպես նաեւ անդամ չհանդիսացող պետություններ կարող են հետամուտ լինել Մասնակի, Մասնակի ընդլայնված կամ Ընդլայնված համաձայնությունների շրջանակներում համատեղ միջկառավարական գործունեության իրականացմանը՝ հավասար հիմունքներով,

Հիմք ընդունելով Խորհրդարանական վեհաժողովի բարենպաստ դիրքորոշումը,

Որոշում է հետեւյալը.

I Մասնակցությունը միջոցառումներին

Միջոցառումները կամ միջոցառումների շարքը, որոնք չեն իրականացվում որպես Եվրոպայի խորհրդի բոլոր անդամների համատեղ ջանք կամ որոնց որեւէ մեկը ցանկանում է համագործակից դարձնել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետությունների, կարող են իրականացվել.

– Եվրոպայի խորհրդի անդամ որոշ պետությունների կողմից՝ որպես Մասնակի համաձայնություն,

– Եվրոպայի խորհրդի որոշ անդամ պետությունների եւ մեկ կամ ավելի անդամ չհանդիսացող պետությունների կողմից՝ որպես Մասնակի ընդլայնված համաձայնություն,

– Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունների եւ մեկ կամ ավելի անդամ չհանդիսացող պետությունների կողմից՝ որպես Ընդլայնված համաձայնություն:

II Մասնակցության որոշում

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի Կանոնադրության Հոդված 20-ով նախատեսված մեծամասնությամբ, կարող է՝

– Լիազորել որոշ անդամ պետությունների՝ Կազմակերպության շրջանակներում իրականացնել միջոցառում կամ միջոցառումների շարք, երբ միջոցառումը կամ միջոցառումների շարքը ընդունվում է միայն դրա օգտին քվեարկած ներկայացուցիչների կողմից եւ սահմանափակվում համապատասխանաբար.

– Մասնակի համաձայնության՝ միայն անդամ պետությունների ներկայացուցիչներից կազմված լինելու պարագայում հրավիրել անդամ չհանդիսացող ցանկացած պետության՝

միանալ Մասնակի համաձայնությանը կամ վերջինիս որոշ միջոցառումներին.

– հրավիրել անդամ չհանդիսացող ցանկացած պետության՝ միանալու Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին՝ իրականացնելու որեւէ միջոցառում կամ միջոցառումների շարք:

III Բյուջեն

Մասնակի համաձայնությունը, Ընդլայնված մասնակի համաձայնությունը կամ Ընդլայնված համաձայնությունը (այսուհետեւ «Համաձայնություն») ֆինանսավորվում են դրան մասնակցող անդամ եւ անդամ չհանդիսացող պետությունների ներդրումներից կազմված բյուջեից:

Մանդակը, համաձայն որի հաշվարկվում են անդամ չհանդիսացող պետությունների ներդրումները, որոշվում են վերջիններիս հետ համաձայնությամբ. որպես ընդհանուր կանոն, այդ սանդակը համահունչ պետք է լինի Եվրոպայի խորհրդի ընդհանուր բյուջեում կատարվող ներդրումների սանդակի չափանիշներին:

Բյուջեն ընդունվում է ամեն տարի՝ միջոցառմանը մասնակից անդամ պետությունների՝ Նախարարների կոմիտեում ներկայացուցիչներից եւ, հարկ եղած դեպքում, միջոցառմանը մասնակից անդամ չհանդիսացող պետությունների ներկայացուցիչներից կազմված մարմնի կողմից. այդպիսով վերջինները կունենան քվեարկելու իրավունք:

Համաձայնության բյուջեի ընդունումը եւ կառավարումը կարգավորվում են Ֆինանսական կանոնակարգով, անհրաժեշտ փոփոխություններով:

IV Համաձայնության գործելը

Համաձայնությունը կազմելու վերաբերյալ որոշմամբ սահմանվում են դրա մարմինները եւ հստակեցվում դրա գործունեության իրականացմանն ուղղված որոշակի աշխատակարգեր: Եթե որոշմամբ այլ բան չի նախատեսվում, Եվրոպայի խորհրդում ուժի մեջ գտնվող ընդհանուր կանոնները, որոնք վերաբերում են կոմիտեի կառուցվածքին, իրավասությունների շրջանակին եւ աշխատանքի մեթոդներին եւ, մասնավորապես, Նախարարների տեղակալների հավաքների Կանոնակարգին, անհրաժեշտ փոփոխություններով, կիրառվում են Համաձայնության մարմինների պարագայում:

Համաձայնության մարմինների համար քարտուղարական ծառայություններն ապահովվում են Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից:

V Լրացուցիչ անդամներ եւ դիտորդներ

Եթե Համաձայնության ձեւավորման վերաբերյալ որոշումն այլ կերպ չի նախատեսում՝

– Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետություն ցանկացած պահի կարող է միանալ ցանկացած Համաձայնության՝ այդ մասին համապատասխան հայտարարություն ներկայացնելով Գլխավոր քարտուղարին.

– Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետություն Նախարարների կոմիտեի որոշմամբ կարող է հրավիրվել միանալու Ընդլայնված կամ Ընդլայնված մասնակի որեւէ համաձայնության՝ նախապես քննարկելով անդամ չհանդիսացող այն պետությունների հետ, որոնք արդեն մասնակցում են:

– Անդամ չհանդիսացող ցանկացած պետություն եւ ցանկացած միջազգային միջկառավարական կազմակերպություն Նախարարների կոմիտեի կողմից արդեն մասնակից անդամ չհանդիսացող պետությունների հետ քննարկելուց հետո կարող է հրավիրվել դիտորդի կարգավիճակով մասնակցելու Մասնակի, Ընդլայնված մասնակի կամ Ընդլայնված համաձայնության գործունեությանը: Դիտորդի կարգավիճակով մասնակցող պետություններից ֆինանսական ներդրումներ չեն պահանջվում:

VI Եվրոպական համայնքը

Եվրոպական համայնքը կարող է Նախարարների կոմիտեի կողմից հրավիրվել մասնակցելու Մասնակի, Ընդլայնված մասնակի կամ Ընդլայնված համաձայնությանը: Նրա մասնակցության եղանակը որոշվում է մասնակցության հրավերքի վերաբերյալ որոշմամբ:

VII Անցումային դրույթներ

Սույն փաստաթուղթը փոխարինում է 1951 թվականի օգոստոսի 2-ին Նախարարների կոմիտեի 9-րդ նստաշրջանում ընդունված Մասնակի համաձայնությունների վերաբերյալ Կանոնադրային բանաձեռին:

Արդեն հիմնադրված Մասնակի համաձայնությունները շարունակում են գործել իրենց սեփական կանոններով:

Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի վերաբերյալ կանոնադրային բանաձեւ (2000) ¹

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2000 թվականի մարտի 15-ին Նախարարների տեղակալների 702-րդ հավաքի ընթացքում²)

Նախարարների կոմիտեն, համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 15.ա եւ 16 հոդվածներում սահմանված պայմանների,

Հաշվի առնելով Կանոնադրային թիվ (94) 3 բանաձեւը, որը վերաբերում է Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի կազմավորմանը,

Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդում ինստիտուցիոնալ բարեփոխումների մասին Խորհրդարանական վեհաժողովի առաջարկը,

Հաշվի առնելով սեփական Կանոնադրության բարեփոխման վերաբերյալ Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների մշտական համաժողովի եւ Խարտիայի կանոնադրային կիրարկման եւ վերանայման մասին Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի առաջարկները,

Խորհրդակցելով Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունները ներկայացնող կազմակերպությունների, մասնավորապես՝ Եվրոպական մարզերի վեհաժողովի եւ Եվրոպայի քաղաքային համայնքների եւ տարածաշրջանների խորհրդի հետ, եւ հաշվի առնելով տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում ժողովրդավարության զարգացման գործում նրանց ունեցած ներդրումը,

Համարելով, որ ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկը տեղեկան եւ տարածաշրջանային ամուր եւ արդյունավետ ժողովրդավարության գոյությունն է՝ ենթատվության սկզբունքին համապատասխան, որը ներառված է Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայում, համաձայն որի նախընտրելի է, որպեսզի պետական իրավասություններն իրականացվեն այն իշխանությունների կողմից, որոնք ամենամոտն են գտնվում քաղաքացիներին՝ հաշվի առնելով պետական պարտականությունների չափը եւ բնույթը եւ արդյունավետության եւ տնտեսման պահանջները,

Ձգտելով ընդլայնել եւ զարգացնել տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների դերը Եվրոպայի խորհրդի ինստիտուցիոնալ կառուցվածքում,

Նկատի ունենալով այն, որ Եվրոպայի թե՛ տեղական եւ թե՛ տարածաշրջանային իշխանություններն իրապես ներկայացնող խորհրդակցական մարմնի ստեղծումն արդեն սկզբունքորեն հաստատվել է Եվրոպայի խորհրդի պետությունների եւ կառավարությունների ղեկավարների կողմից Վիեննայի գագաթաժողովում,

Նկատի առնելով այն, որ ստորեւ ամրագրված դրույթները համահունչ են Եվրոպայի խորհրդի Կանոնադրությանը,

Որոշեց հետեւյալը.

Հոդված 1

Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը (հետայսու՝ ԵՏՏԻԿ) տեղական եւ տարածաշրջանային իշխանությունները ներկայացնող մարմինն է։ Կոնգրեսին անդամակցությունը եւ գործառույթները կարգավորվում են ներկա հոդվածներով,

¹ Ծանոթություն Քարտուղարության կողմից. սույն փաստաթուղթը փոխարինում է 1994 թվականի հունվարի 14-ին Նախարարների կոմիտեի կողմից Նախարարների տեղակալների 506-րդ հավաքում ընդունված Կանոնադրային բանաձեւ (94) 3-ին, որը վերաբերում է Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսին: Տես Հոդված 6-ը:

² Նույն օրը Նախարարների կոմիտեն ընդունեց Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի խարտիան, որը ներկայացված է սույն բանաձեւի հավելվածում:

Նախարարների կոմիտեի կողմից ընդունված Խարտիայով եւ ԵՏՏԻԿ-ի կողմից ընդունված Ընթացակարգի կանոններով:

Հոդված 2

1 ԵՏՏԻԿ-ը խորհրդակցական մարմին է, որի նպատակներն են.

ա ապահովել տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների մասնակցությունը Եվրոպական միասնականության իդեալի իրացմանը, ինչպես սահմանված է Եվրոպայի խորհրդի Կանոնադրության Հոդված 1-ում, ինչպես նաեւ դրանց ներկայացվածությունը եւ ակտիվ ներգրավումը Եվրոպայի խորհրդի աշխատանքներին.

բ Նախարարների կոմիտեին ներկայացնել առաջարկներ՝ խթանելու տեղական եւ տարածաշրջանային ժողովրդավարությունը.

գ խթանել համագործակցությունը տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների միջեւ.

դ սեփական պարտականությունների ոլորտում պահպանել կապը միջազգային կազմակերպությունների հետ՝ որպես Եվրոպայի խորհրդի արտաքին հարաբերությունների ընդհանուր քաղաքականության մի մաս.

ե սերտորեն համագործակցելով աշխատել, մի կողմից՝ տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների ազգային, ժողովրդավարական միությունների հետ, իսկ մյուս կողմից՝ Եվրոպական այն կազմակերպությունների, որոնք ներկայացնում են Եվրոպայի խորհրդի անդամ երկրների տեղական եւ տարածաշրջանային իշխանությունները:

2 Նախարարների կոմիտեն եւ Խորհրդարանական վեհաժողովը պետք է խորհրդակցեն ԵՏՏԻԿ-ի հետ այն հարցերի շուրջ, որոնք հավանական է, որ ազդեցություն կունենան տեղական եւ/կամ տարածաշրջանային այն իշխանությունների պարտավորությունների եւ էական շահերի վրա, որոնց ԵՏՏԻԿ-ը ներկայացնում է:

3 Կոնգրեսը պարբերաբար ըստ առանձին երկրների պատրաստում է բոլոր անդամ պետություններում եւ Եվրոպայի խորհրդին անդամակցելու դիմում ներկայացրած պետություններում տեղական եւ տարածաշրջանային ժողովրդավարության վիճակի մասին զեկույցներ, եւ, մասնավորապես, ապահովում է Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայի սկզբունքները կիրարկումը:

4 ԵՏՏԻԿ-ի առաջարկությունները եւ տեսակետները պատշաճ կարգով ուղարկվում են Խորհրդարանական վեհաժողով եւ/կամ Նախարարների կոմիտե: Այն որոշումները եւ ընդունված այլ փաստաթղթերը, որոնք չեն ենթադրում Վեհաժողովի եւ/կամ Նախարարների կոմիտեի կողմից հնարավոր գործողություն, որպես տեղեկատվություն փոխանցվում են վերջիններին:

Հոդված 3

1 ԵՏՏԻԿ-ը, իր Խարտիայում նախատեսված բացառությունների հնարավորությամբ հանդերձ, պետք է կազմված լինի տեղական կամ տարածաշրջանային իշխանության ընտրական մանդատ ունեցող ներկայացուցիչներից: Պատվիրակները պետք է նշանակվեն համաձայն Խարտիայում սահմանված չափանիշների եւ ընթացակարգի, իսկ Խարտիան պետք է ընդունվի Նախարարների կոմիտեի կողմից. յուրաքանչյուր պետություն, մասնավորապես, պետք է ապահովի իր տեղական եւ տարածաշրջանային իշխանության տարատեսակ մարմինների պատշաճ ներկայացվածություն:

2 Յուրաքանչյուր անդամ պետություն ԵՏՏԻԿ-ում ունի նույնքան տեղերի իրավունք, որքան ունի Խորհրդարանական վեհաժողովում: Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է ուղարկել Ներկայացուցիչների քանակին հավասար քանակով Փոխարինողներ, որոնք նշանակված կլինեն միեւնույն չափանիշների եւ ընթացակարգի

համաձայն:

3 Ներկայացուցիչները եւ Փոխարինողները ուղարկվում են ԵՏՏԻԿ-ի երկու լիազումար նիստերի ժամկետով եւ պահպանում են իրենց գործառույթները մինչեւ հաջորդ նիստի բացումը:

Հոդված 4

1 ԵՏՏԻԿ-ը լիազումար նիստեր է գումարում տարին մեկ անգամ: Լիազումար նիստերը պետք է տեղի ունենան Եվրոպայի խորհրդի կենտրոնակայանում, եթե Կոնգրեսը եւ Նախարարների կոմիտեն փոխհամաձայնությամբ չեն որոշում նիստերը գումարել այլ վայրում:

2 ԵՏՏԻԿ-ն իր գործառույթներն իրականացնում է երկու Պալատների մասնակցությամբ. մեկը ներկայացնում է տեղական իշխանությունները (հետայսու՝ «Տեղական իշխանությունների պալատ»), իսկ մյուսը ներկայացնում է տարածաշրջանային իշխանությունները (հետայսու՝ «Տարածաշրջանների պալատ»): ԵՏՏԻԿ-ը կարող է, իրեն հատկացված բյուջետային ռեսուրսների սահմաններում եւ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի առաջնահերթությունները, ձեւավորել իր պարտականությունները կատարելու տեսակետից անհրաժեշտ հետեւյալ մարմինները. Բյուրո, Սշտական հանձնաժողով, Կանոնադրային կոմիտեն եւ, ըստ կարիքի՝ հատուկ աշխատանքային խմբեր: Կոնգրեսը պետք է Նախարարների կոմիտեին տեղեկացնի իր կոմիտեների ձեւավորման մասին: Բյուրոն, Սշտական հանձնաժողովը եւ Կանոնադրային կոմիտեն Պալատում կարող են հանդիպել միայն այս մարմինների լիազումար նիստերի ընթացքում, եւ որեւէ Կանոնադրային կոմիտեի՝ Պալատում կայացած հանդիպման ընթացքում դիտարկված ցանկացած հարց չի կարող դիտարկվել նույն Կոմիտեի լիազումար նիստում:

Հոդված 5

Կոնգրեսը, համաձայն իր Ընթացակարգային կանոնների, որոշում է Կանոնադրային կոմիտեներում տեղերի քանակն այնպես, որպեսզի երաշխավորվի հետեւյալ սկզբունքը՝ Կոնգրեսի յուրաքանչյուր անդամ կոմիտեում ընդգրկվելու իրավունք ունի:

Հոդված 6

1 Սույն փաստաթուղթը փոխարինում է Նախարարների կոմիտեի կողմից 1994 թվականի հունվարի 14-ին, Նախարարների տեղակալների 506-րդ հանդիպման ընթացքում ընդունված թիվ (94) 3 Կանոնադրային բանաձեւին, որն առնչվում է Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի ստեղծմանը:

2 Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի Խարտիայի տեքստը, որը որպես հավելված ներկայացված է սույն Կանոնադրային բանաձեւին կից, փոխարինում է Նախարարների տեղակալների 506-րդ հանդիպման ընթացքում ընդունված Խարտիայի տեքստը:

Կանոնադրային բանաձեւի հավելված (2000)1

Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի (ԵՏՏԻԿ) խարտիա

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2000 թվականի մարտի 15-ին Նախարարների տեղակալների 702-րդ հավաքի ընթացքում)

Հոդված 1

ԵՏՏԻԿ-ի նպատակները սահմանված են (2000) 1 Կանոնադրային բանաձեւի Հոդված 2-ում, որը վերաբերում է Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսին:

Հոդված 2

1 Գործող Խարտիայի անցումային դրույթներով նախատեսված բացառությունների հնարավորությամբ հանդերձ, ԵՏՏԻԿ-ը պետք է կազմված լինի տեղական կամ տարածաշրջանային իշխանության՝ ընտրական մանդատ ունեցողների շարքից ընտրված ներկայացուցիչներից:

2 Յուրաքանչյուր անդամ պետության պատվիրակության անդամությունը ԵՏՏԻԿ-ում պետք է լինի այնպիսին, որպեսզի ապահովվի հետեւյալը.

ա անդամ պետության տարածքից ընտրված Ներկայացուցիչների հավասարակշռված աշխարհագրական պատկանելություն.

բ անդամ պետությունում տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների տարբեր տեսակների համահավասար ներկայացվածություն.

գ անդամ պետությունում տեղական եւ տարածաշրջանային իշխանության կանոնադրային մարմիններում տարբեր քաղաքական ուժերի համահավասար ներկայացվածություն.

դ անդամ պետությունում տեղական եւ տարածաշրջանային իշխանության կանոնադրային մարմիններում կանանց եւ տղամարդկանց համահավասար ներկայացվածություն:

3 Յուրաքանչյուր անդամ պետություն իրավունք պետք է ունենա ԵՏՏԻԿ-ում զբաղեցնել նույնքան տեղ, որքան Խարհրդարանական վեհաժողովում: Յուրաքանչյուր անդամ պետություն իրավունք ունի ուղարկել նույնքան Փոխարինողներ, որքան ուղարկում է Ներկայացուցիչներ: Փոխարինողները կարող են Պալատների անդամներ դառնալ նույն իրավասություններով, ինչ Ներկայացուցիչները:

4 Ինչ վերաբերում է Տարածաշրջանների պալատին, ապա Ներկայացուցիչները պետք է լինեն այնպիսի իշխանություններից, որոնք գտնվում են կենտրոնական կառավարության եւ տեղական իշխանությունների միջեւ եւ ունեն կամ ինքնակազմակերպման բացառիկ իրավունքներ, կամ այնպիսի բացառիկ իրավունքներ, որոնք սովորաբար առնչվում են կենտրոնական իշխանությանը եւ տիրապետում են սեփական պատասխանատվությամբ եւ իրենց բնակչությունների շահերից ելնելով պետական գործերի մի զգալի մաս իրապես կառավարելու հմտությունների՝ համաձայն ենթատվության սկզբունքի: Եթե երկիրն ունի այնպիսի իշխանություն, որի տիրապետության տիրույթն ընդարձակ է, եւ այն կրում է թե՛ տեղական եւ թե՛ տարածաշրջանային մակարդակներով պատավորություններ, ապա նման իշխանության Ներկայացուցիչները նաեւ պետք է լիազորված լինեն մասնակցելու Տարածաշրջանների պալատի աշխատանքներին: Նման իշխանությունների ցուցակը պետք է տրամադրվի տվյալ պետության կողմից նշանակումների ընթացակարգի հմատեքստում: Այն անդամ պետությունները, որոնք սույն պարբերության իմաստով տարածաշրջանային իշխանություններ չունեն, պետք է կարողանան Տարածաշրջանների պալատ եւ դրա մարմիններ Ներկայացուցիչներ ուղարկել խորհրդակցական ձայնի իրավունքով:

5 ԵՏՏԻԿ-ում Ներկայացուցիչների ընտրությունը կարգավորող ընթացակարգերը եւ կանոնները պետք է կիրառվեն նաեւ Փոխարինողների ընտրության ժամանակ:

6 Ներկայացուցիչները եւ Փոխարինողները պետք է նշանակվեն ԵՏՏԻԿ-ի երկու լիազումար նիստերի ժամանակահատվածով եւ իրենց գործառնությունները պետք է պահպանեն մինչեւ հաջորդ նիստի բացումը: Որեւէ Ներկայացուցչի կամ Փոխարինողի մահվան կամ հրաժարականի կամ վերոնշյալ պարբերություն 1-ում հիշատակված մանդատի կորստի դեպքում նույն կանոնների եւ ընթացակարգի համաձայն նախորդի մանդատի մնացած ժամանակահատվածի համար ընտրվում է փոխարինում: Ի հավելումն, ազգային պատվիրակությունների կազմը կարող է փոփոխվել, որպեսզի հաշվի առնի տեղական եւ/կամ տարածաշրջանային ընտրությունների արդյունքում փոխված քաղաքական

իրավիճակը՝ լիազումար նիստից առնվազն մեկ ամիս առաջ: Այս դեպքում նոր պատվիրակությունը նաեւ պետք է համապատասխանի վերոնշյալ չափանիշներին:

Հոդված 3

1 ԵՏՏԻԿ-ի Ներկայացուցիչներն ու Փոխարինողները նշանակվում են պաշտոնական ընթացակարգով, որը յուրաքանչյուր անդամ պետության համար առանձնահատուկ է: Մասնավորապես, այդ ընթացակարգը յուրաքանչյուր անդամ պետությունում ապահովում է համապատասխան միությունների եւ/կամ ինստիտուցիոնալ կառույցների հետ խորհրդակցություն եւ սահմանում այն սկզբունքները, որոնց համաձայն նշանակվում են Ներկայացուցիչներ երկու Պալատներում: Յուրաքանչյուր կառավարություն այս ընթացակարգի մասին տեղեկացնում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին: Նման ընթացակարգը հաստատվում է ԵՏՏԻԿ-ի կողմից՝ իր Ընթացակարգային կանոններում ներառված սկզբունքների համաձայն:

2 Յուրաքանչյուր անդամ պետություն, իր պատվիրակության կազմի մասին Գլխավոր քարտուղարին ծանուցելիս, նշում է այն Ներկայացուցիչների եւ Փոխարինողների անունները, ովքեր պետք է դառնան Տեղական իշխանությունների պալատի անդամ եւ այն Ներկայացուցիչների եւ Փոխարինողների անունները, ովքեր պետք է դառնան Տարածաշրջանների պալատի անդամ:

Հոդված 4

Ամեն անգամ, երբ նշանակվում են անդամներ, Բյուրոն քննում է այս կերպ նշանակված Ներկայացուցիչների մանդատները: Բյուրոյի կողմից իրականացվող այս քննության արդյունքում տեղի է ունենում քվեարկություն կամ նստաշրջանում, կամ, եթե նշանակումը կատարվում է այլ ժամանակ, քվեարկությունը տեղի է ունենում Մշտական հանձնաժողովում: Որեւէ անդամի մանդատի ճանաչումը մերժելը կարող է հանգեցնել հետեւանքների՝ սկսած օրական նպաստների չվճարումից մինչեւ ուղղակի հեռացում:

Հոդված 5

1 Տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների միջազգային միությունները, որոնք Եվրոպայի խորհրդում ունեն խորհրդատվական կարգավիճակ, ԵՏՏԻԿ-ում պետք է ունենան Դիտորդի կարգավիճակ: Այլ կազմակերպություններ, դիմելու դեպքում, կարող են ստանալ Դիտորդի կարգավիճակ ԵՏՏԻԿ-ում, եթե այս կառույցի Մշտական հանձնաժողովը կայացնի համապատասխան որոշում կամ ԵՏՏԻԿ-ի Պալատներից որեւէ մեկում՝ համաձայն վերջինիս Ընթացակարգային կանոնների:

2 ԵՏՏԻԿ-ը կարող է, դիմում ստանալու դեպքում, Հատուկ հյուրի կարգավիճակ շնորհել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետությունների տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների, որոնք նման կարգավիճակ ունեն Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում: ԵՏՏԻԿ-ի Բյուրոն յուրաքանչյուր Հատուկ հյուրի հատկացնում է նույնքան տեղեր, որքան վերջինս ունի Խորհրդարանական վեհաժողովում: Հատուկ հյուրի կարգավիճակով պատվիրակությունների նշանակումը կատարվում է նույն սկզբունքների հիման վրա, որոնք սահմանված են հոդված 2-ում եւ 3-ում:

3 Պարբերություն 2-ում հիշատակված դիտորդները եւ պատվիրակությունների անդամները մասնակցում են ԵՏՏԻԿ-ի եւ դրա Պալատների աշխատանքներին՝ օգտվելով խոսելու իրավունքից, որի վերաբերյալ հարկ է ստանալ Նախագահի համաձայնությունը, սակայն որը չի դրվում քվեարկության: Մշտական հանձնաժողովում, Կանոնադրային կոմիտեներում եւ աշխատանքային խմբերում նրանց մասնակցության այլ պայմանները սահմանվում են ԵՏՏԻԿ-ի Ընթացակարգային կանոններում:

Հոդված 6

1 ԵՏՏԻԿ-ի հանդիպումները տեղի են ունենում հերթական նստաշրջաններում, տարին մեկ անգամ: Հերթական նստաշրջանները գումարվում են Եվրոպայի խորհրդի

կենտրոնակայանում, եթե ԵՏՏԻԿ-ի կամ ԵՏՏԻԿ-ի Մշտական հանձնաժողովի եւ Նախարարների կոմիտեի կողմից ընդհանուր համաձայնությամբ այլ որոշում կայացված չէ:

2 Երկու Պալատներից յուրաքանչյուրի նիստերը գումարվում են ԵՏՏԻԿ-ի նստաշրջանից անմիջապես առաջ եւ/կամ հետո: ԵՏՏԻԿ-ի Բյուրոյի առաջարկով Պալատներից յուրաքանչյուրը, նախօրոք ստանալով Նախարարների կոմիտեի համաձայնությունը, կարող է անցկացնել այլ նիստեր:

Հոդված 7

1 ԵՏՏԻԿ-ն իր աշխատանքները կազմակերպում է երկու Պալատների՝ Տեղական իշխանությունների պալատի եւ Տարածաշրջանների պալատի շրջանակներում: Յուրաքանչյուր Պալատ իր տրամադրության տակ ունի տեղերի նույնքան քանակ, որքան ունի Կոնգրեսը:

2 Յուրաքանչյուր Պալատ նշանակում է իր Բյուրոյի կազմը, որի մեջ մտնում են Պալատի Նախագահը եւ յոթ անդամներ, հնարավորության սահմաններում անդամ պետությունների միջեւ պահպանելով աշխարհագրական արդարացի բաժանում: Ոչ մի անդամ պետություն իրավունք չունի Պալատներից որեւէ մեկի Բյուրոյում ունենալ մեկից ավելի Ներկայացուցիչ:

Հոդված 8

1 Մշտական հանձնաժողովը նստաշրջանների միջեւ ընկած ժամանակահատվածում գործում է ԵՏՏԻԿ-ի անունից:

2 Մշտական հանձնաժողովը կազմում յուրաքանչյուր ազգային պատվիրակությունից ընդգրկվում են երկուական ներկայացուցիչներ: Այդ ներկայացուցիչների թվում ներառվում են ԵՏՏԻԿ-ի Բյուրոյի անդամները: Այն պետությունները, որոնք ներկայացված են միայն մեկ Պալատում, Մշտական հանձնաժողովում ունեն միայն մեկ տեղ:

Հոդված 9

1 Երկու Բյուրոները համատեղ կազմում են ԵՏՏԻԿ-ի Բյուրոն, որը Մշտական հանձնաժողովի եւ Կոնգրեսի նստաշրջանների միջեւ ընկած ժամանակահատվածում պատասխանատու է Կոնգրեսի աշխատանքի շարունակականությունն ապահովելու համար:

2 Բյուրոն նաեւ պատասխանատու է ԵՏՏԻԿ-ի լիազումար նիստի նախապատրաստման, երկու Բյուրոների աշխատանքների համակարգման, մասնավորապես՝ երկու Բյուրոների միջեւ հարցերի բաշխման, կանոնադրային կոմիտեների աշխատանքների համակարգման, բյուջեի նախագծման, Կոնգրեսի եւ երկու Պալատների միջեւ բյուջետային միջոցների հավասարակշիռ տեղաբաշխման համար: Ինչ վերաբերում է հարցերի բաշխմանը, ապա որեւէ հարց չի կարող քննարկվել երկու Պալատներում: Ցանկացած հարց, որը հանդիսանում է երկու Պալատների հետաքրքրության առարկա, դիտարկվում է ԵՏՏԻԿ-ի կողմից:

3 Կոնգրեսի Բյուրոյի նիստերը նախագահում է Կոնգրեսի նախագահը:

Հոդված 10

1 Երկու Պալատների եւ կանոնադրային կոմիտեների միջեւ հոդված 9-ի համաձայն հարցերի բաշխումից հետո, այն Պալատի Բյուրոն, որն իրավասու է զբաղվել տվյալ հարցով, բացառիկ դեպքերում կարող է ստեղծել ժամանակավոր աշխատանքային խումբ՝ անդամների սահմանափակ քանակով (առավելագույնը՝ տասնմեկ), որոնք օժտված կլինեն հատուկ տեխնիկական առաջադրանքով (հաշվետվությունների պատրաստում, համագործակցային ծրագրերի կամ Եվրոպայի խորհրդի որոշակի միջկառավարական գործողությունների վերահսկում):

2 Այն դեպքերում, երբ որեւէ հարց հայտնվում է երկու Պալատների իրավասության ներքո, ԵՏՏԻԿ-ի Բյուրոն բացառիկ դեպքերում կարող է ստեղծել երկու Պալատների համար ընդհանուր մի ժամանակավոր աշխատանքային խումբ:

3 Ժամանակավոր աշխատանքային խմբերի աշխատանքների կազմակերպումը ղեկավարվում է Ընթացակարգային կանոններով:

4 ԵՏՏԻԿ-ը եւ իր երկու Պալատները կարող են, Ընթացակարգային կանոններում սահմանվելիք դրույթների համաձայն, խորհրդակցել հոդված 5-ում հիշատակված տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների միջազգային միությունների ներկայացուցիչների, ինչպէս նաեւ տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների ազգային պատվիրակությունների կողմից առաջադրված ազգային միությունների հետ: Այս խորհրդակցություններին մասնակցության ծախսերը հոգում են այդ կազմակերպությունները կամ միությունները:

Հոդված 11

1 Նախարարների կոմիտեին եւ/կամ Խորհրդարանական վեհաժողովին ուղղվող բոլոր առաջարկությունները եւ կարծիքները, ինչպէս նաեւ տեղական եւ տարածաշրջանային իշխանություններին, որպէս ամբողջության, ուղղվող բանաձեւերն ընդունվում են ԵՏՏԻԿ-ի կողմից իր լիազումար նիստում կամ Մշտական հանձնաժողովի կողմից:

2 Այնուամենայնիվ, երբ մի որեւէ հարց ԵՏՏԻԿ-ի Բյուրոյի կողմից համարվում է որպէս բացառապէս տվյալ Պալատի իրավասության ներքո գտնվող.

ա Առաջարկությունները եւ կարծիքները, որոնք առնչվում են այնպիսի հարցերի, որոնք ուղղվում են Նախարարների կոմիտեին եւ/կամ Խորհրդարանական վեհաժողովին, ընդունվում են Մշտական հանձնաժողովի կողմից, սակայն առանց տվյալ հարցի բովանդակության որեւէ դիտարկման: Բացառիկ դեպքերում Կոնգրեսի Բյուրոն կարող է մյուս Պալատին լիազորել, որպէսզի վերջինս այդ փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ պատրաստի կարծիք:

բ Այն բանաձեւերը, որոնք առնչվում են տվյալ հարցին եւ ուղղվում են Կոնգրեսի կողմից ներկայացվող իշխանություններին, ընդունվում են Մշտական հանձնաժողովի կողմից՝ առանց տվյալ հարցի բովանդակության որեւէ դիտարկման

Հոդված 12

Պայմանները, որոնց ներքո Նախարարների կոմիտեն եւ Խորհրդարանական վեհաժողովը կարող են հավաքականորեն ներկայացված լինել ԵՏՏԻԿ-ի կամ Պալատների բանավեճերում եւ այն պայմանները, որոնց ներքո այդ կառույցների Ներկայացուցիչները կարող են որպէս անհատներ խոսել այդ քննարկումների ժամանակ, ԵՏՏԻԿ-ի հետ խորհրդակցելուց հետո սահմանում է Նախարարների կոմիտեն եւ դրանք ներառում ԵՏՏԻԿ-ի Ընթացակարգային կանոններում:

Հոդված 13

1 ԵՏՏԻԿ-ը եւ դրա յուրաքանչյուր Պալատ ընդունում են իրենց առանձին Ընթացակարգային կանոնները: Մասնավորապէս, կանոնների յուրաքանչյուր համախումբը սահմանում է հետեւյալը.

ա քվորում.

բ քվեարկելու իրավունքին եւ պահանջվող մեծամասնություններին առնչվող հարցեր՝ նկատի առնելով այն, որ Նախարարների կոմիտեին եւ Խորհրդարանական վեհաժողովին ուղղվող առաջարկությունները եւ կարծիքները պետք է ընդունվեն քվեների երկու երրորդ մեծամասնությամբ.

գ նախագահի, փոխնախագահների եւ Բյուրոյի այլ անդամների

ընտրության ընթացակարգ.

դ օրակարգի ձեւավորման եւ պատվիրակներին այն փոխանցելու ընթացակարգ.

ե կանոնադրային կոմիտեների եւ ժամանակավոր աշխատանքային խմբերի աշխատանքների կազմակերպումը:

2 Ավելին, ԵՏՏԻԿ-ի կանոնները պետք է սահմանեն Ներկայացուցիչների եւ նրանց Փոխարինողների անունների մասին ծանուցման ժամկետները եւ եղանակը, ինչպես նաեւ նրանց մանդատներն ստուգելու կարգը՝ հաշվի առնելով, մասնավորապես, Խարտիայի 2-րդ եւ 7-րդ հոդվածները:

Հոդված 14

1 Կոնգրեսն իր նախագահին նշանակում է յուրաքանչյուր Պալատի անդամներից՝ պարբերաբար փոփոխվելու սկզբունքով: Նախագահը պաշտոնավարում է երկու հերթական նստաշրջանների ընթացքում:

2 ԵՏՏԻԿ-ի յուրաքանչյուր Պալատ իր անդամներից ընտրում է նախագահ, ով պաշտոնավարում է երկու հերթական նստաշրջանների ընթացքում:

Հոդված 15

1 Կոնգրեսի Քարտուղարությունն ապահովվում է Կոնգրեսի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից, որին ընտրում է Կոնգրեսը: Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատու է Կոնգրեսի եւ նրա մարմինների առաջ եւ գործում Գլխավոր քարտուղարի ղեկավարության ներքո: Թեկնածուներն ազատ են իրենց դիմումները հանձնել ուղղակիորեն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որը դրանք կփոխանցի Կոնգրեսի նախագահին՝ կցելով իր եզրակացությունը: Սույն թեկնածությունների քննությունից հետո Բյուրոն Կոնգրեսի քվերակությանն է հանձնում թեկնածուների ցուցակը: Մշտական հանձնաժողովը Կոնգրեսի անունից սահմանում է Կոնգրեսի Գլխավոր գործադիր տնօրենի ընտրության ընթացակարգը՝ պարզաբանելու համար այն կետերը, որոնց ներկա Խարտիան չի անդրադառնում:

2 Կոնգրեսն իր Գլխավոր գործադիր տնօրենին ընտրում է հինգ տարի ժամկետով՝ երկարաձգման իրավունքով, սակայն այն չի կարող գերազանցել Եվրոպայի խորհրդի ողջ աշխատակազմի համար կիրառվող տարիքային սահմանափակումը:

3 Գլխավոր քարտուղարը նշանակում է Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալին՝ Կոնգրեսի Բյուրոյում քննարկելուց հետո:

4 Ինչ վերաբերում է յուրաքանչյուր Պալատի Քարտուղարներին, ապա Գլխավոր քարտուղարը նրանց նշանակում է տվյալ Պալատի Նախագահի հետ մտքերի ոչ պաշտոնական փոխանակումից հետո, որի ընթացքում Գլխավոր քարտուղարը տեղեկացնում է իր մտադրությունների եւ իր ընտրության պատճառների մասին:

Հոդված 16

1 Նախարարների կոմիտեն ընդունում է Կոնգրեսի բյուջեն՝ որպես Եվրոպայի խորհրդի կանոնավոր բյուջեի բաղկացուցիչ:

2 Այդ բյուջեն նախագծվում է այնպես, որ հնարավոր լինի հոգալ ԵՏՏԻԿ-ի նստաշրջանների, երկու Պալատների եւ ԵՏՏԻԿ-ի մարմինների ժողովների եւ այլ՝ հստակորեն հաշվարկելի ծախսերը, որոնք կապված են ԵՏՏԻԿ-ի գործունեության հետ: Լիազումար նիստերի համար սույն բյուջեով նախատեսվում են միայն Ներկայացուցիչների մասնակցության ծախսերը:

3 Կոնգրեսի բյուջեն Եվրոպայի խորհրդի բյուջեի քննարկման ժամանակ քվերակվում է առանձին:

4 ԵՏՏԻԿ-ը Գլխավոր քարտուղարին եւ Նախարարների կոմիտեին տեղեկացնում է իր բյուջետային կարիքների մասին: Նրա պահանջագրերը քննարկվում են Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվող բյուջեի նախագծի ընդհանուր համատեքստում:

5 Կոնգրեսի անդամների օրապահիկների հաշվարկման սանդղակներն ու մեթոդները հանդիսանում են Նախարարների կոմիտեի հատուկ որոշման առարկա:

6 Կոնգրեսի բյուջեն (մի կողմ թողնելով մշտական աշխատակազմի աշխատավարձերն ու քաղաքական խմբերին տրամադրվող գումարները) կազմում է մի փաթեթ, որի կառավարման համար պատասխանատու է Կոնգրեսի Բյուրոն: Այդուհանդերձ, Բյուրոն պետք է առաջնորդվի Եվրոպայի խորհրդի ֆինանսական կանոնակարգերով եւ հոգ տանի, որ Կոնգրեսի երկու Պալատների կանոնադրությամբ նախատեսված մարմինների գործունեության համար հատկացվեն անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Այն չի կարող գերազանցել Կոնգրեսի համար նախատեսված բյուջետային հատկացումների ընդհանուր սահմանաչափը:

Անցումային դրույթներ

1 Որպես Հոդված 2-ի պարբերություն 1-ի բացառություն, չընտրված անձինք, ովքեր պատասխանատու են ընտրված տեղական կամ տարածաշրջանային մարմնին, կարող են Կոնգրեսում Ներկայացուցիչներ լինել, պայմանով, որ նրանք կարող են ազատվել պաշտոնից անհատական կերպով, վերոնշյալ ընտրովի մարմնի կողմից կամ նրա որոշման հետեւանքով, եւ որ պաշտոնից ազատելու այսպիսի լիազորությունը բխում է օրենքից: Սույն դրույթները պետք է վերանայվեն վեց տարի հետո:

2 Կոնգրեսի Գլխավոր գործադիր տնօրենը, ինչպես նախատեսված է Հոդված 15-ով, ընտրվում է, եթե առկա են անհրաժեշտ պայմաններ: